

չէ որ կը զբաղէին, այլ եւ մետաքսի արտադրութեամբ:

1581-ին Անգլիացի վաճառական ուղեգիր John Newbery կը գրէ. «Օթեւանեցիք Naxnan (Նախիջևան) անունով լաւ քաղաք մը, որ առատ է ուտեստեղէնով, մասնաւորաբար խաղող (angours) նաեւ հում մետաքսով»: Իսկ Երեւանի մէջ, «հոս մետաքսի իւրաքանչիւր բեռի (hemel) համար իբր ճամբու ծախս կը վճարեն հինգ չէքին (chekins)»: (3)

Շատ բան մը չենք գիտեր հայոց մէջ կամ ի Հայաստան մետաքսի արտադրութեան մասին. 1568-ին հայ յիշատակագիր մը կը վկայէ, որ «եւլա խան Թաթար յերկրէն Քաֆայու, եւ անցաւ ի լեւոն Ալսըռոյայ(?), եւ մտաւ երկիրն Շարվանայ (Շիրուան), շատ աւերեաց եւ գերեաց զազգս Հայկազանց, քակեցին ծառն ապրիչումի»: (4) Կարծես թէ այս ութը տարի տեւող աւար-աւերումը չի բաւեր ապրիչումի, այսինքն մետաքսի, որով բնական է մետաքսի որդին, շերամին անունը հայթայթող թուրքի ծառն ալ արմատախիլ կամ ճղակոտոր կը փրճացուի աւազակաբարոյ Թաթարներէն:

(3) Purchas His Pilgrimes VIII. Vol. pp. 468-469: Chekin, ըստ Հ. Ալիշանի ծծեգիմի (հայ վենետ) հին ոսկեղրամ մը:

(4) Վենետիկի Մխթ. Զեռ. Յուցակ Հ. Սարգիսեան: Ա. Մաս, էջ 667: Ասիկա կը հաստատէ Վենետիկցի Iohn-Ethomas Minadoi իր The History of the Warres between the Turks and the Persians գործին մէջ խօսելով Արաքսի եւ Կուրի գետամիջեան հողամասին վրայ, կ'ըսէ: «Իրէս (Արրաշ) անցեալ ժամանակներուն կ'արտադրէր մեծ քանակութեամբ այն նուրբ սպիտակ մետաքսէն, որ առ հասարակ վաճառականներէ Մամօտին մետաքս կը կոչուէր, որմէ սակայն այս օր (ԺՁ. դարու Բ. կէս) այլեւս գտնել կարելի չէ, ոչ իսկ փոքր քանակութեամբ, պատճառաւ այն սոսկալի աւերումներուն եւ կործանումներուն, որոնց ենթարկուեցաւ այս հողամասը»: (Անգլ. հրատ., Լոնտոն, 1595)

Թովմաս Հէրպէրը Արրաշի մասին կը գրէ. «Նշանաւոր շահաստանն Արրաշ կոչուած եւ արժանի այդ յորջորջումին, քանի որ Արաքս

Հին Ջուղա Հայ առեւտուրի եւ մշակոյթի պատմութեան մէջ շատ կարեւոր դերք մը ունենալով հանդերձ դեռ շատ մութ եւ ստուերամած կը մնայ: Հարեւանցի եւ գրեթէ անարժէք է մեր զիտցածը այս մեր երկրորդ Անիին մասին: Ոչ ոք տուած է մեղի ժամանակակից նկարագրութիւնը այդ քանի մը օրուան մէջ լքեալ ճոխ եւ մեծահարուստ հայաքաղաքին համար: Կը պակսի անոր աւերակներուն մէկ դոհացուցիչ նկարագրութիւնը, կամ գոնէ մաս մը գրեթէ 10,000-ի հասնող աննման տապանաքարերուն արձանադրութեանց: Հազիւ տասնեակ մը ձեռագիրներ հասած են մեզի եւ ծանօթ որոնք հին Ջուղա դրուած են: Հին Ջուղայի մասին ամենաշոյլ նկարագրողը Դաւրիժեցին է, որ սակայն, աւաղ, մեծ բան մը չըսեր: Օտարներն ալ կցկտուր տեղեկութիւններ միայն կուտան Ջուղայի մասին: Իմ ամենէն շատ փայտաքանդ երազս հին Ջուղայի աւերակներուն եւ տապանաքարերուն մէջ գոնէ քանի մը ամիսներ թափառելու է:

1931-ին, երբ ուսումնասիրութեան համար Հայաստան այցելեցի, բարեկամներ յանձնարարեցին անպատճառ տեսնալ հին Ջուղան: Եւ երբ դէպի Պարսկական սահմանը կը դիմէի երկաթուղիով, իմ խնդրանքիս վրայ կառախումբին հայ պաշտօնեան ինծի ցոյց տուաւ ինչ որ կարելի էր տեսնել հին Ջուղայի մասին ոլորապտոյտ սուրացող կառաչարքի մը պատուհանէն: Ինչ որ ամենէն առաջ ուշադրութիւնս գրաւեց բանակի մը զինուորներուն հանգոյն

գետէն հոսող առուններով կը ջրուի, ուրիշներէ կոչուած է Երէզ, իսկ այլոցմէ Սէրէզ, այն պատճառով որ հոն առատ մետաքս կը վաճառուի: չըջակայ երկիրը շփոթուած է Սէրիզա Ռէճիօի (Չինաստան: Յ. Ք.) հետ. իրականութիւնը այն է որ մետաքսի ծայրաստիճան առատութիւն կայ հոս եւ որ ուղտերու վրայ բեռցուած մեծ քանակութեամբ կը տարուի Գէշան, ուր գորգարուեստը եւ քանի մը տեսակ մետաքսեղէններու ոստայանակութիւնը կատարելութեան հասցուած է, բան մը որ քիչ չի նպաստեր քաղաքին (բարդաւաճման)»: (1677ի հրատարակութիւն, էջ 190):